

ՀԱՅ ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ
ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ
«ԲԱԶՄԱՎԷՊԻ» ԷԶԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի երիցագոյն պարբերական «Բազմավէպը», լինելով գիտական, բանասիրական, գրական հանդէս, գոյութեան առաջին իսկ տարիներից իր էջերը տրամադրել է նաեւ հայագիտութեան այնպիսի կարեւոր բնագաւառին, ինչպիսին Հայաստանի միջնադարեան ճարտարապետութեան ուսումնասիրութիւնն է:

Հանդէսի հիմնադրումից ընդամէնը չորս տարի անց՝ 1847 թ. տպագրուեց հայ ճարտարապետութեանը նուիրուած առաջին յօդուածը՝ «Անի քաղքին ակերակները» խորագրով: Եւ խորհրդանշական է, որ այդ առաջին աշխատանքի հեղինակը ոչ այլ ոք է, քան տակաւին երիտասարդ Ղեւոնդ Ալիշանը՝ հայագիտութեան ապագայ պատրիարքը: Միաժամանակ տուեալ յօդուածով Ալիշանը սկիզբ դրեց մի այնպիսի կարեւոր ու յարատեւ թեմայի, ինչպիսին «անիագիտութիւնն» է, որն անընդմէջ մշակոււմ է մինչեւ օրս: Թօղուածում հանգամանօրէն ներկայացոււմ են Հայաստանի երբեմնի ծաղկուն ու հռչակաւոր մայրաքաղաքի գլխաւոր կառոյցները՝ պարիսպները, միջնաբերդը, Մայր տաճարը եւ Ս. Փրկչի եկեղեցին (բերոււմ են այս երկուսի հիմնական չափերը), Տիգրան Հոնենցի ու Ս. Առաքելոց եկեղեցիները, Մանուկչի մզկիթը, վիմափոր շինութիւնները եւ այլն:

Ալիշանն Անիի ճարտարապետութեան անդրադարձաւ նաեւ յետագայում: 1864 թ. տպագրուեց նրա «Տեղագրութիւն Հայոց Մեծաց» ուսումնասիրութիւնը, որտեղ առաջին անգամ Հայաստանի մի շարք եկեղեցիներ ներկայացուել են յատկազօծերի ու ճակատների գծագրերով: Սա կարեւոր հանգամանք է, որովհետեւ ճարտարապետական յուշարձանների մասին գրելիս չի կարելի բաւարարուել միայն նկարագրութեամբ, կամ տալ նրա պատ-

կերը. անհրաժեշտ են նրա չափազրուծիչները, նուազագոյնը՝ յատկապէս: Այս տեսակէտից Ալիշանի նշուած աշխատութիւնն արժէքաւորուում է Անիի Մայր տաճարի յատկագծով, արեւմտեան ու հարաւային ճակատների վերակազմութեամբ. ընդ որում տրուում է մայր տաճարի՝ արդէն աւերուած գմբէթի ենթադրեալ տեսքը: Հրատարակուած են նաեւ Տիգրան Հոնենցի եկեղեցու յատկապէսը եւ հարաւային ճակատի գծագիրը՝ կիսաւեր գաւթի վերակազմութեամբ:

Ալիշանը տուեալ աշխատութիւնում գիտական արտակարգ բարեխղճութեամբ ներկայացնում է Բաբերդի, Կարսի, Վարզահանի եկեղեցիները, Կարին քաղաքը՝ բերդով, եկեղեցիներով, մզկիթներով ու շրջակայքի վանքերով, Տայքի յուշարձանները՝ Թորթումի, Օշքի, Տայոց Քարի եկեղեցիները, Խախուի վանքը: Մեծ ուշադրութիւն է դարձնում նրանց վիմագրութեանը, տալով իր վերծանութիւնները (Անիի Ս. Փրկչի եկեղեցի, Տայոց Քար եւ այլն):

1899 թ. տպագրուեց Նիկողայոս Մառի «Անի, Հին Հայաստանի մայրաքաղաքը (պատմութիւն)» ոչ մեծ յօդուածը, որում հաշուետուութեան ձեւով հանրութեանը ներկայացուում են Անիի պեղումների առաջին արդիւնքները: Ուշագրաւ է հեղինակի այն տեսակէտը, որ Մանուէի մզկիթը կառուցուել է որպէս քաղաքի դատարանի շէնք եւ յետագայում վերածուել է մզկիթի: 1907 թ. «Ազգային կեանք» տեղեկատուական յօդուածում «Անիի պեղումները» վերնագրով ենթաբաժնում համառօտ խօսուում է Ն. Մառի՝ Անիի միջնաբերդի պեղումների մասին: «Բազմավէպը» Անիին անդրադաձել է նաեւ Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, երբ, դժբախտաբար, Հին Հայաստանի մայրաքաղաքը արդէն գտնուում էր Թուրքիայի տիրապետութեան տակ. 1923 թ. տպագրուեց Կ. Բասմաճեանի «Անիի անցեալն ու ներկան» յօդուածը, որտեղ հիմնականում քննարկուում են Մայր տաճարի, Ս. Փրկչի եկեղեցու, միջնաբերդի Պալատական եկեղեցու շինարարական արձանագրութիւնները:

1906-07-08 թթ. տպագրուեց Հ. Մ. Պոտուրեանի «Հայկական ճարտարապետութիւնը» խորագրով աշխատանքը, որում հեղինակն առաջին անգամ տալիս է Հայաստանի միջնադարեան կարեւոր յուշարձանների խմբաւորումն ըստ տիպաբանական յատկանիշների՝ խաչաձեւ (էջմիածնի Մայր տաճար, Ս. Հռիփսի-

մէ եկեղեցի), երկարաւուն (Հոռոմոսի եւ Բազնայրի վանքերի գլխաւոր եկեղեցիներ, Շիրակավանի Ս. Ամենափրկիչ եկեղեցի), բոլորածեւ (Անիի Ս. Փրկչի եկեղեցի): Խօսուում է հայկական եկեղեցիների ներքին տարածութեան կազմակերպման, Աւագ խորանի ձեւի մասին: Սա, փաստօրէն, «Բազմավէպում» հայ ճարտարապետութեանը նուիրուած առաջին ընդհանրացնող ուսումնասիրութիւնն էր:

Մեծ է Հ. Ս. Էփրիկեանի վաստակը պատմական Հայաստանի ճարտարապետական յուշարձանները հանրութեանը ներկայացնելու գործում: 1896-97 թթ. «Վանայ ծովակը» յօդուածը տպագրելուց յետոյ (որը հիմնականում նուիրուած էր Աղթամարի Ս. Խաչ եկեղեցուն), Հ. Ս. Էփրիկեանը 1899 թ. հրատարակեց «Բնաշխարհիկ բառարանը» (այբբենական կարգով տրուած են Հայաստանի նշանաւոր բնակավայրերը, ամրոցները, վանքերն ու եկեղեցիները), 1900 թ. «Բազմավէպի» բացառիկում՝ «Բնաշխարհի վանքեր», նոյն թրուականին՝ «Նկարագիր բնաշխարհի» աշխատանքը: Այս բոլորը հիմք ծառայեցին նրա «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան» հանրագիտարանի համար, որի, ցաւօք, միայն առաջին երկու հատորները լոյս տեսան:

Յաջորդ ընդհանրացնող աշխատութիւնը եղաւ «Բազմավէպում» 1930, 32, 33 եւ 34 թթ. շարունակական տպագրուած՝ Հ. Գ. Նահապետեանի «Քրիստոնէական ճարտարապետութիւն» խորագրով մենագրութիւնը (մինչ այդ հեղինակը 1926 թ. տպագրել էր «Ուսումնասիրութիւն հայ գիւղական տան» յօդուածը): Այստեղ հեղինակը հիմնաւորուում է, որ կենտրոնագմբէթ կառոյցների «նախնական խանձարուրքն եղած է Հայաստան» եւ «անջատ գմբէթի ճարտարապետութեան առաջնութիւնը կը պատկանի Հայոց ազգին եւ այնուհետեւ պիտի կոչուի Հայկական ճարտարապետութիւն»:

Ամրոցաշինութիւնը եղել է միջնադարեան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետութեան կարեւոր ճիւղը: Մեծ Հայքի, Կիլիկիայի բերդերը հայկական ամրաշինական արուեստի նուաճումներից են: Եւ նրանց ուսումնասիրութեան գործում մեծ է Հ. Մ. Յովհաննիսեանի աւանդը. նա «Հայաստանի բերդերը» ընդհանուր խորագրով, մօտ. մէկ տասնամեակի ընթացքում (1953, 54, 58, 59, 60, 61, 63, 64 թթ.) յօդուածաշար տպագրեց, որը յետոյ դարձաւ առանձին, մեծածաւալ գիրք՝ հայկական ամ-

րոցների մի յիրաւի հանրագիտարան: Իսկ 1976 թ. տպագրուեց նրա՝ «Կիլիկիայի բերդերը» յօդուածը: Հ. Մ. Յովհաննիսեանը հայկական, բերդերն ուսումնասիրում է պատմական լայն զուգահեռներով՝ ասորական, ուրարտական, յունահռոմէական աղբիւրների օգտագործումով, քննարկում հայ մատենագրութեան «բերդ» անուան տարբերակները, տալիս ուշագրաւ մեկնաբանութիւններ (օրինակ՝ «բերդ» եւ «ամուր» անուանումները վերաբերում են սահմանային ամրոցներին):

1940 թուականից «Բազմավէպի» էջերում հայ ճարտարապետութեանը նուիրուած ուսումնասիրութիւնների հրատարակման գործը նոր, կարեւոր փուլ թեւակոխեց, որը նշանաւորուեց մասնագէտ ճարտարապետների աշխատակցութեամբ: Առաջինը եղաւ (եւ ամենաբեղմնաւորը) Շուեցարիայի ճարտարապետների միութեան անդամ Ս. Ճեւահիրճեանը, որը մօտ չորս տասնամեակ համագործակցեց «Բազմավէպի» հետ եւ հրատարակեց տասից աւելի մենագրական հետազօտութիւններ՝ նուիրուած հայ ճարտարապետութեան կազմաւորման ու զարգացման տարբեր հիմնահարցերին եւ առանձին կարեւոր յուշարձաններին: Ինքնատիպ են նրա տեսակէտները, յաճախ՝ շատ անսպասելի, որոշ դէպքերում՝ վիճելի: Սակայն միշտ հետաքրքրական եւ ստիպող՝ սուեալ խնդրի շուրջը խորհելու եւ մէկ անգամ եւս քննելու:

«Հայկական կամարը գոթական ոճին մէջ» (1940 թ.) նա հիմնաւորում է, որ գոթական ճարտարապետութեան ներվիւրային (ջլադեղային) համակարգի նախատիպը հանդիսացել են հայկական խաչուող (փոխհատուող) կամարները: «Հաղբատի ժամատունը» (1941 թ.) յօդուածում ներկայացւում է կրկնակի խաչուող կամարներով եզակի ծածկ ունեցող այդ բացառիկ կառոյցը եւ նշում, որ արաբները հայերից են վերցրել աղեղախուրճը (ogive) «Միւնազարդ ծածկոցի դրութիւնը եւ կամարակապ զարդասիւնները հայկական ճարտարապետութեան մէջ» (1942 թ.) աշխատանքում ներկայացւում են Տեկորի Ս. Սարգիս եւ Երերոյքի Ս. Կարապետ վկայարանների, Օձունի գմբէթաւոր բազիլիկի արտաքին սիւնասարահները եւ առաջ քաշւում այն տեսակէտը, որ հայկական եկեղեցիների ճակատների դեկորատիւ կամարաշարն առաջացել է այդ սրահներից, ընդ որում նախորդելով Արեւմուտքում այդ կամարաշարերի երեւան գալուն:

Բաւական իւրօրինակ եւ անսպասելի տեսակէս է յայտնում Ս. Զեւահիրճեանը «Գմբէ՞թ, թէ լուսամուտ» յօդուածում (1946 թ.): Ըստ նրա՝ չէնքի իրական գմբէթը պէտք է ծածկի ողջ ներքին տարածութիւնը, որը դժուար է որպէս շինանիւթ քարի կիրառման դէպքում, եւ այդ պատճառով Հայաստանի եկեղեցիների գմբէթները, որոնք առաջացել են հայկական ժողովրդական բնակարանի «հազարաչէն» երդիկաւոր փայտէ ծածկից, փաստօրէն լուսամուտ են, այլ ոչ թէ գմբէթ: Դրան դժուար է համաձայնուել, դա հակասում է գիտական գրականութեան մէջ ընդունուած բնորոշմանը, սակայն խորհելու տեղիք է տալիս: Շարունակելով, հեղինակը նշում է, որ բիւզանդական եկեղեցիներում թմբուկով գմբէթները առաջին անգամ յայտնուում են «հայկական-մակեդոնեան» հարստութեան օրօք եւ եզրակացութիւն անելը թողնում է ընթերցողին:

Ս. Զեւահիրճեանի «Հայկական ճարտարապետութեան մէջ ներդաշնակութեան կանոնների փորձեր» աշխատանքը (1947, 42 թթ.) ամբողջովին նուիրուած է Հայաստանի եկեղեցական շէնքերի համաչափական համակարգի ուսումնասիրութեանը: Հեղինակը վերլուծում է Չուարթնոցի տաճարի, Բագարանի Ս. Թէոդորոս, Մարմաշէնի վանքի կաթողիկէ, Էջմիածնի Ս. Գայիանէ, Անիի Տիգրան Հոնենց եկեղեցիների համաչափութիւնները, պարզում, որ ուղղանկիւն յատակագծով կառոյցներում երկարութեան եւ լայնութեան յարաբերութիւնը կազմում է A_2 , կամ դրան մօտ մեծութիւն, եւ գալիս է այն եզրակացութեան, որ Հայաստանում ներդաշնակութիւնն ամբողջի եւ մասի միջեւ առուել արտայայտում է կենտրոնակազմ, կենտրոնագմբէթ շէնքերում, քան ուղղանկիւն, ձգուած կառոյցներում: Այս դրոյթին չի կարելի համաձայնուել, որովհետեւ իրենց արտակարգ ներդաշնակ համաչափութիւններով աչքի են ընկնում հէնց հեղինակի բերած օրինակները, իսկ միջնադարեան Հայաստանի խոշորագոյն ճարտարապետի կերտած գլուխ-գործոցը՝ Անիի Մայր տաճարն ուղղակի հերքում է այդ կարծիքը: Սակայն վերջում Ս. Զեւահիրճեանը յանգում է մի ուրիշ, բայց միանգամայն ճիշտ եզրակացութեան. Հայաստանի եկեղեցական շէնքերը, հակադրութեան հիման վրայ ստեղծուած համաչափութիւնների շնորհիւ, փոքր չափերով ունեն կոթողային կերպար: Եւ իսկպէս դա այդպէս է՝ բիւզանդական, արեւմտաեւրոպական տաճարների համեմատ զգա-

լի փոքր հայկական եկեղեցիներն աչքի են ընկնում իրենց վեհ, կոթողային տեսքով:

Ս. Ճեւահիրճեանն ուսումնասիրել է նաեւ Հայաստանի ամրաշինական արուեստը: Նրա «Հայկական ռազմաճարտարապետութիւն» յօդուածում (1949, 50 թթ.) քննուած են Անիի պաշտպանական համակարգը, Կիլիկիայի բերդերը, հայկական միջնադարեան ռազմավարութիւնը, գէնքերը, պատմական զուգահեռներ բերում: Ս. Ճեւահիրճեանն անդրադարձել է նաեւ եկեղեցական շէնքերի մանրամասներին, որը նորոյթ էր արուեստաբանութեան մէջ: «Պատուհանը հայկական ճարտարապետութեան մէջ» յօդուածում (1952 թ.) նա եկեղեցիների լուսամուտների նեղ եւ փոքր լինելը բացատրում է Հայաստանի խիստ կլիմայով, ծագումնաբանօրէն բխեցնում հեթանոսական տաճարներից, որոնք ընդհանրապէս լուսամուտ չունեն: Ըստ հեղինակի՝ լուսաւորութեան հիմնական աղբիւրը գմբէթն է, իսկ սակաւաթիւ ու նեղ լուսամուտները փոքր շէնքին մեծի պատրանք են հաղորդում: Վերը նշուած եզրայանգումները մասամբ են ընդունելի, որովհետեւ վաղքրիստոնէական Հայաստանի եկեղեցիները, ընդհակառակը, աչքի են ընկնում պատուհանների մեծ քանակով ու խոշորութեամբ, ներսի տարածութեան առատ լուսաւորութեամբ (Արուսի Ս. Գրիգոր եկեղեցի, Թալինի Կաթողիկէ, Էջմիածնի Ս. Հռիփսիմէ եկեղեցի եւ շատ ուրիշներ):

«Մանդուղքը հայկական ճարտարապետութեան մէջ» յօդուածում (1956 թ.) հեղինակը ներկայացնում է Հայաստանի ԺԴ դ. եկեղեցիների կոնսոլ (բարձակային) աստիճանները եւ նշում, որ դրանք Եւրոպայում տարածում գտան միայն ԺԵ դ. սկսած: 1976 թ. լոյս տեսաւ Ս. Ճեւահիրճեանի "Les reminiscences de l'architecture arménienne en Occident" յօդուածը, որը սկզբնաւորեց «Բազմավէպի» էջերում հայկական ճարտարապետութեանը նուիրուած աշխատանքների հրապարակումը եւրոպական լեզուներով: Դա կարեւոր էր, որովհետեւ վաղուց եկել էր ժամանակը հայ ճարտարապետութեան նուաճումները, նրա ազդեցութիւնն այլ երկրների շինարարական արուեստի վրայ աշխարհի գիտական հանրութեանը ներկայացնել եւրոպական լեզուներով: Հեղինակը յօդուածում խօսում է Էջմիածնի Մայր տաճարի յօրինուածքի օրինակով Թ դ. Եւրոպայում կառուցուած երկու նշանաւոր յուշարձանների՝ Օրլեանի Ժերմինյի դէ Պրէ եւ Միլանի Սան Սա-

տիրո եկեղեցիների մասին: Շատ պատկերաւոր համեմատութիւն կատարում՝ Արեւմուտքը եւ Արեւելքը նմանեցնում է երկու հաղորդակից անօթների, որոնք մէկը միւսին են փոխանցում մշակութային, արուեստի, ճարտարապետութեան իրենց նուաճումները: 1978 թ. «Հովիւի եկեղեցին» յօդուածում Ս. Ճեւահիրճեանը Անիի այսօր արդէն, դժբախտաբար, գոյութիւն չունեցող այդ եզակի յուշարձանն իրաւացի անուանում է «Հայկական ճարտարապետութեան գոհար», նշում, որ նրա աստղաձեւ յորինուածքը ծագում է յունահռոմէական նախատիպերից, սակայն ամբողջովին հայացուած է: Հեղինակն ըստ թ. Թորամանեանի չափազրութիւնների կատարել է եկեղեցու համաչափական վերլուծութիւնը, քննել ընդհանրապէս Հայաստանում միջնադարում կիրառուող շաղախի յատկութիւնները, անուանելով այն «հայկական կրաշաղախ»:

«Բագմավէպին» 1930ական թթ. վերջից հայ ճարտարապետութեանը վերաբերող աշխատանքներով սկսում էին թղթակցել եւրոպացի՝ օտարազգի հեղինակները: 1939 թ. տպագրուել է "L'architettura armena e quella di Bisanzio" յօդուածը, որի հեղինակն է իտալացի Զուգեպպէ Ֆրասսոնը: Նա 1934-35 թթ. եղել է հայ ճարտարապետութեան խոշորագոյն գիտակ եւ հայ մշակոյթի մեծ բարեկամ Ե. Սործիգովսկու ուսանողը՝ Վիեննայում, կիսել իր մեծ ուսուցչի հայեացքները եւ տեսակէտները Հայաստանի շինարարական արուեստի վերաբերեալ ու դրանք պաշտպանել իր աշխատութիւններում: Նշուած յօդուածում Ֆրասսոնը գրում է, որ հայ ճարտարապետութիւնը եղել է ինքնուրոյն, ստեղծել է եկեղեցական շէնքերի սեփական տիպեր, որոնցից կարեւոր են Բագարանի, Մաստարայի, Աւանի, Զուարթնոցի, Արուճի յորինուածքները: Քառակուսի հիմքի վրայ բարձրացող գմբէթը համարում է տեղական՝ Հայաստանում ստեղծուած: Մօտ կէս դար յետոյ հրատարակած "Josef Strzygowski e la scoperta dell'arte armena" յօդուածում կրկնում է աւստրիացի գիտնականի այն տեսակէտը, որ գեղարուեստը Արեւմուտքում չի տարածուել Միջերկրականի վաճառականների միջոցով, այլ Ժողովուրդների արտագաղթով, Պարսկաստանից եւ Հայաստանից դէպի Արեւելեան Եւրոպա ու ապա Գերմանիա, եւ հայերը որոշակի ազդեցութիւն են ունեցել արեւմտեան արուեստի վրայ:

1987 թ. Ֆրասսոնը հրատարակեց "Aghtamar" մեծածաւալ ուսումնասիրութիւնը: Հայ եւ ընդհանրապէս քրիստոնէական արուեստի գլուխ-գործոց Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին բազմիցս լուրջ մենագրութիւնների թեմա է դարձել (Հ. Օրբելի, Ս. Տէր-Ներսէսեան, Ստ. Մնացականեան եւ ուրիշներ) ու, թւում է թէ, դժուար է նոր խօսք ասել եկեղեցու ու յատկապէս նրա պատկերաքանդակների մասին: Բայց Ֆրասսոնը նոր եւ բաւական հետաքրքիր տեսակէտներ է առաջարկում ու մեկնաբանութիւններ կատարում: Նա համարում է, որ Աղթամարի եկեղեցու յորինուածքը ընտրել է Գագիկ Արծրունի թագաւորը, հրահանգելով Մանուէլ ճարտարապետին կրկնել Արծրունիների իշխանական տան տոհմական տապանատան Զօրադիրի եկեղեցին: Հեղինակը Գագիկ արքային է վերագրում նաեւ հարթաքանդակների պատկերազրութիւնը (սա վիճելի տեսակէտ է) եւ տալիս է նրանց իր մեկնաբանութիւնը: Ըստ Ֆրասսոնի՝ քանդակները հիմնականում երեք ընոյթի են ու պատկերում են՝ ա) ընութեան կեանքը, բ) կենդանիների կեանքը, գ) մարդկանց կեանքը: Այս վերջին խմբի քանդակներում շեշտում են ընութեան ոյժերին յաղթելու, կենդանական աշխարհին տիրելու, ինչպէս նաեւ թշնամուն յաղթելու գաղափարը: Իսկ կարեւորը՝ պատկերում է Հայ ժողովրդի դիմադրութիւնը Հայաստանը նուաճելու իսլամի փորձին, քրիստոնէական արժէքներին նրա հաւատարմութեան վերահաստատումը:

1949 թ. տպագրուեց միլանահայ ճարտարագէտ Հ. Գազանճեանի "Mechitar architetto del suo monastero" յօդուածը, որտեղ փաստագրական նիւթի հիման վրայ ցոյց է տրւում Սուրբ Ղազար վանքի կառուցման ժամանակ Մխիթարեան միաբանութեան հիմնադիր եւ առաջին արքահայր Մխիթար վարդապետ Սեբաստացու որպէս ճարտարապետ հանդէս գալը: Հեղինակը տալիս է նաեւ վանքի յետագայ կառուցումների ու վերակառուցումների պատմութիւնը, զուգակցելով բնագիրը արխիւային եւ իր կազմած յատակագծերով: Հ. Գազանճեանը յետագայում դարձաւ Միլանի Պոլիտեխնիկ ինստիտուտում ստեղծուած Հայ ճարտարապետութեան ուսումնասիրութեան ու վաւերագրման կենտրոնի գործօն անդամը, բազմիցս եղաւ Հայաստանում, զեկուցումներով մասնակցեց Հայ արուեստին նուիրուած միջազգային գիտաժողովներին:

1970-80ական թթ. հայկական եկեղեցիների յարդարանքի, պատկերաքանդակների մասին աշխատանքներ հրատարակեցին Իտալացի Զուլիոյ Ենին եւ հայ ճարտարապետութեան՝ այսօր Արեւմուտքում ամենազիտակ ու բազմավաստակ հետազօտող, ֆրանսիացի գիտնական դոկտոր Ժան-Միշել Թիերին: 1977 թ. Զ. Ենին տպագրեց "L'iconographie de la Vierge dans certains reliefs arméniens du Tard Moyen Age" յօդուածը, նուիրուած Հաղարծինի ու Սպիտակաւոր Ս. Աստուածածին վանքերի, Նորավանքի, Արենիի Ս. Աստուածածին եկեղեցու պատկերաքանդակներին: Այդ նոյն տարում Ժ.-Մ. Թիերին տպագրեց գրեթէ նոյն թեմայով ուսումնասիրութիւն՝ "Les sculptures da la coupole de l'Ermitage de Spitakavor en Siounie", որտեղ ապացուցում է, որ Սպիտակաւոր վանքում Աստուածամօր պատկերաքանդակը կերտել է ԺԳ-ԺԴ դդ. հայ հռչակաւոր ճարտարապետ, քանդակագործ ու նկարիչ Մոմիկի աշակերտը: Զ. Ենին "Alcune soluzioni costruttive fra Armenia e regione Balcanica" յօդուածում (1981 թ.) հիմնաւորում է, որ Ռումինիայում եկեղեցական շէնքերում լայնօրէն կիրառուող կեղծ գմբէթի ձեւը ԺԱ դ. անցել է Հայաստանից: Ժ. Մ. Թիերին "Les salles a coupole archaisantes arméniens" յօդուածում (1985 թ.) ներկայացնում է եւ քննարկում «Գմբէթաւոր դահլիճի» տիպին պատկանող Շիրակավանի, Արզխնայի, Նորատուսի, Հոռոմոսի, Հայկաձորի, Բազնայրի, Մարմաշէնի եւ այլ եկեղեցիների յորինուածքը ու եզրակացնում, որ՝ ա) գմբէթաւոր դահլիճի տիպը ծագել է միանաւ բազիլիկից, բ) յատուկ է Անիի ճարտարապետական դպրոցին, գ) այս տիպը ԺԱ դ. փոխարինուեց «ներգծուած խաչ» յորինուածքով:

Հայ ճարտարապետութեանն են սերտօրէն առնչուում Մխիթարեան միաբանութեան անդամ, Հ. Տ. Եարտըմեանի աշխատութիւնները: 1977 թ. տպագրուած նրա «Կարինի Հնձուց կամ Կարմիր վանքը» ընդարձակ յօդուածը այդ հետաքրքրական ու քիչ ուսումնասիրուած մենաստանի մասին սպառիչ եւ կարեւոր մենագրութիւն է: Յատկապէս արժէքաւոր է հայ ճարտարապետութեան պատմութեան համար նրա «Անպատ» եւ «վանք» եզրերու բովանդակային իմաստային նշանակութիւնը հայ վանական մտածողութեան մէջ՝ շահեկան ուսումնասիրութիւնը (1998 թ.): Հայ եկեղեցական ճարտարապետութիւնը անմիջական կապ ունի Հայոց եկեղեցու առանձնայատկութիւնների, ծիսակարգի,

մենաստանների կանոնադրութեան հետ: Եւ այս աշխատութիւնը բաւական կարեւոր է եւ օգտակար Հայաստանի վանքերի ու անապատների համալիրների կազմաւորման գործընթացը ճիշտ մեկնաբանելու համար: 1980ական թթ. «Բազմավիշպում» հայ ճարտարապետութեան հիմնահարցերի լուսաբանման գործում մի նոր փուլ էլ սկսուեց՝ Հայաստանի ճարտարապետ գիտնականների աշխատակցութեան շնորհիւ: 1982 թ. տպագրուեց Հ. Հասրաթեանի "L'architecture des églises arméniennes avec un sanctuaire rectangulaire a l'intérieur" յօդուածը, որտեղ առաջին անգամ ուսումնասիրուել է հայկական եկեղեցիների ուղղանկիւն ձեւ ունեցող Աւագ խորանները, տրուել է այդ ձեւի ծագումնաբանութիւնը, համեմատական վերլուծութիւն կատարուել հարեւան քրիստոնէայ երկրների նոյնատիպ եկեղեցիների հետ:

Դ. Քերթմենջեանի «Վաղ միջնադարեան Հայաստանի քաղաքների արեւտրահասարակական կեդրոնների քաղաքաշինական եւ ճարտարապետական առանձնայատկութիւնները, յօդուածում (1985 թ.) հեղինակն իր կազմած յատկազօծերով ներկայացնում է Արտաշատի, Տիգրանակերտի, Կարինի, Նփրկերտի, Դուինի քաղաքաշինական կազմութիւնը:

1993 թ. տպագրուեց Ա. Պետրոսեանի «Պօղոս-Պետրոս եկեղեցին եւ նրա որմնանկարները» յօդուածը, որը, սակայն, էական խմբագրման կարիք ունէր: Թերի է վերնագիրը՝ Հայաստանում Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցիները քիչ չեն, նրանց թւում նաեւ որմնանկարներ ունեցող (օրինակ՝ Տաթեւի վանքի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին) եւ ներկայացուած յօդուածի վերնագրում անպայման պէտք է նշուէր, որ դա Երեւանի եկեղեցուն է վերաբերում: Յօդուածը չունի պատկերազարդում, իսկ ճարտարապետութեան կամ կերպարուեստի թեմայով որեւէ գործ առանց պատկերների հրատարակելը արժեզրկում է տուեալ աշխատանքը: Ներկայացուող որմնանկարները բազմաշերտ են, եւ շերտերից մէկը հեղինակը թուագրում է ԺԲ դ., հաշուի չառնելով, որ այն կատարուած է իւղաներկով, իսկ այդ տեխնիկան որմնանկարչութեան մէջ շատ աւելի ուշ է հանդէս գալիս: Յօդուածում կայ հակապատմական եւ ոչ մի փաստով չհիմնաւորուած մի այսպիսի մերկապարանոց յայտարարութիւն, որ «Երեւանը Զ-ի դդ. եղել է քաղկեդոնականների ազդեցութեան ներքոյ կամ նրանց ձեռքին»: Ի դէպ, Երեւանի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու որմնանկարները

բազմիցս հրատարակուել են, ընդ որում առաջին անգամ դեռեւս 1932-33 թթ. Փարիզում, «Անահիտ» հանդէսում (Յ. Քիւրտեան, «Նորագիւտ հին որմնանկարներ Երեւանի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցւոյն»):

1995 թ. տպագրուեց Ա. Զարեանի «Բոլորաբերդ (Պռոշաբերդ) ամրոցը» յօդուածը, որում հեղինակի չափագրութիւններով գիտական գրականութեան մէջ առաջին անգամ ներկայացուում է Վայոց ձորում Պռոշեան իշխանների կառուցած այդ նշանաւոր ամրոցը:

Հայ ճարտարապետութեան մասնագէտների եւ «Բազմավէպի» համագործակցութիւնը սրանով չի աւարտուի, դա, անկասկած, կը շարունակուի ապագայում եւս, եւ այդ մեծ նպաստ կը բերի հայագիտութեան զարգացմանն ընդհանրապէս:

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹԵԱՆ